Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/66922/02/22**

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.01.2023թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Հ. Զարգարյանս, ծանոթանալով «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության հայցադիմումին ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 08.12.2022թ. թիվ 4319-Ա որոշումը՝ «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑԻ

«Արշին-Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունը 28.12.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 08.12.2022թ. թիվ 4319-Ա որոշումը՝ «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը Դատարանի աշխատակազմին է հանձնվել 04.01.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ *պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:*

2. Գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով»:

Տվյալ դեպքում ներկայացված հայցապահանջով հայցվորը վիճարկում է պատվիրատու պատասխանողի գործողությունները՝ ուղղված թիվ «ԵՔ-ՄԱԾՁԲ-22/98» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի միակողմանի լուծմանը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը վերացնելուն, ուստիև հայցը

ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի 08.12.2022թ. թիվ 4319-Ա որոշումը՝ «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 15 փերվարի 2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական էլեկտրոնային կայքի (datalex.am) միջոցով՝ դատական ակտի թղթային հասանելիությունն ապահովելով նույն օրը՝ ժամը 17:00-ից հետո:

Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Պարզաբանվում է, որ Դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ իրավասու է հրավիրել դատական նիստ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում: